

ԳՆԱԹԵԿՆԵՆ ԿԻՆ

Շէն տուն տաւր դարձաւ
Օջախի ծովսր մարեցաւ:

Ա.

Փողոցի կողմի դուռը բաց էր: Ներս մտաւ մի կին, սան-
դուխներէն վեր իլաւ և խկոյն չոքեց գետին ու ակսեց անի
ու վախ անելով՝ խոր հառաչել: Մենք թողինք մեր բարի-
կենդանի ուրախութիւնը և շարունեցանք նրա շուրջը: Ո՞վ էր
նա և ինչ կը խնդրէր՝ անխօս:—Տարիք 30—35 հազիւ կլինէր,
բարձրահասակ և ամուր կաղմուածք ունէր. Գլխին կապեր
էր հնամաշ՝ տաճկական եազմալ՝, որ ծածկեր էր նրա թոռո-
մած ճակատը, և տակից կերևար իւր արտասուալից և նուա-
ղած աչքերը, որ ցոյց կուտային նրա բովանդակ թշուառու-
թեան պատկերը... մէջքը կապեր էր մի հնացած կարմիր
շալ: Մենք՝ կարծեցինք որ քաղցած մի մուրացկան էր, բայց
ոչինչ չէր խնդրեր, կը նայէր անթարթ աչքերով և կհեկե-
կար...

—Այ նանի, ասա ինչ կուղես, ո՞վ ես:

—Ի՞նչ կը հարցնէք, իմ խեղճութենէն չէք կարող ճան-
չընալ՝ որ իմ անուշ հալբենիքէն զրկուած մի անբաղդ դաղ-
թական կին եմ....

Կաշխատէր միշտ իւր զգացմունքը խեղդել, բայց չէր
կրնար. Աստուած իմ, որքան տպաւորիչ էր նրա դառն հալ-
եացքը. վիշտ և անբախտութիւնը իւր սև կնիքը դրօշմն էր

Ներկայ պատկերը մի նորածիլ գրչի առաջին թոթովն է: Տեղ
ենք տալիս նրան, հաշկաւ, ոչ իբրեւ մի գեղարտեստական երկի, այլ
իբրեւ պատանեկան անկեղծ կրօնից արձակուած մի հառաչանքի:
Սակայն իբրեւ պատկեր նա ոչնչով պակաս չէ թշուառ գաղթականնե-
քի կեանքից վերցրած ուրիշ պատկերներից: ԻՄԲ.

նորա համեստ գէմքի վրայ... նա ընկճուած էր անողոք ճակատագրի՝ սև հարուածներուն տակ... նա մի կենդանի զոհ էր. ինքնամոռացութիւնը զինքն տարեր էր իւր հայրենի— վաթաճախ, իր շէն տունը և սիրելեաց արիւնթաթախ գիակները պատկերացած էին նորա լիշողութեան մէջ... Վերջապէս մի խոր ան քաշեց և դարձեալ մունջ մնաց:

Այո, նա կորցրեր էր ամէն ինչ... իր օրբիկներու անօթութիւնը մղեր էր զինքն օտար աշխարհ... մեռնել նորա հոմար աւելի հեշտ էր՝ քան ձեռք մեկնել մի պատառ. հաց խնդրել... Իբր հաց կերակուր բերինք, խոժոռ խոժոռ նալեց... արտասուքի կաթիլներ զորուեցան մարած աչքերէն... ձեռները ուժգին զլխին դարնելով սկսեց խօսել:

— Վալ... էսա կեանքին, էսա սև օրին... վնվ էի. ինչ դարձայ... Մեղիք Կրպօի հարսն էի, 50 ըծկան դոմէշ և էնչափ էլ եղներ, հինգ խարիր ոչխար իմ շէն տնից դուրս կելնէր, պղինձներով փրփրալէն կաթ, սեր, իւղ կը պատրաստէի... էսա թուլացած ձեռքերովս խարիր խարիր ճամբորդի, թաղալաւշ հաց կը թխէի, կը բաժնէի. վալ... էսա օրին խասալ՝ որ էսա պրտուճ խացն աննեմ ձեր ձեռքից. չեմ ուղեր, չեմ ուղեր, վերուցէք, թող ես էլ, լէթիմներս էլ մեռնինք, չեմ ուտեր, չեմ ուտեր...

Ասաց. հաց և կերակուր թողեց և հեռացաւ. Նս ալն օրուանից ծանօթացալ ալն խանաչան (ազնուազարմ) դադէին՝ լաճախ կը տեսնուէի նորա հետ և նա կը պատմէր իրենց զվախցանցած դժբաղտութիւնները:

Բ.

1896 թուին՝ երբ Վասպուրականի զիւղերը աւրուեցան, քար ու քանդ եղան և Ալշաւաղ գիւղը: Այն գիւղում մի մեծ նահապետական տուր կար: Մեղիք Կրպօենց տունն էր: Եւ ալլ շէն տան հարսն էր Գիւլիզարը: Ծովս դերդաստանի բաղմաթիւ անդամների մեծամասնութիւնը քիւրդերու բարբարոսութեան զոհ եղան՝ գիւղի պետը՝ Մեղիք Կրպօն. իւր կտրիճ օրդին՝ Օհանը (Գիւլիզարի ամուսինը) իւր չորս եղբայրներով որոշ գեղանի կանալք գերի տարուեցան: Մնաց միայն Գիւլիզարը իր երկու որբերով. որք տանից բացակալ եղած էին: Նրեկողեան երբոր տուն վերադարձաւ տեսնելով վերահաս ա-

դէտն՝ ուշաթափ դետին փռուեց... երբ տեսաւ իւր սիրելիները՝ արիւնաթաթախ, վիրաւոր իրար վրայ փռուած... կըրկին անշնչացած դետին զորուեց: Իւր ծերունի հայրը հասաւ և հեռացուց Գիւլիին՝ արդ սրտաճմլիկ տեսարանից: Նրկար ժամանակ Գիւլիզարը հիւանդ պառկած մնաց. և չկարողանալով՝ դիմանալ, վճռեց հեռանալ... և չը տեսնել սիրելիաց մահացած վալերը... հեռանալ... բայց որո՞ւ հետ, ծերունի հայրը չէր համոզուեր:

— Գնանք, Բարօ, գնանք աղատ երկիր... բալքի մոռնաւ իմ սև օրեր...:

— Գիւլի, մի քիչ էլա խղճա քո ծերունի Բարօին, մինչև մեռնեմ. թող ոսկորներս իմ հայրենի հողի մէջ թաղուին... մնանք ալստեղ, Աստուած ողորմածի, թռուներս կը մեծանան՝ քեզ մխիթար կը լինին...:

Գիւլիզարը չը լսեց... վերջապէս լաջողուեց իր ծերունի հօր և երկու զաւակներու հետ հեռանալ իրենց սիրելի վաթանից... հեռու հեռու դադթել, բայց արդեօք կը հաւատար որ բաղտաւորուէր անբախտ Գիւլիզար, — ոչ երբէք: Նա ստիպուեցաւ դռնէ դուռ հանց մուրալ, ո՛հ Գիւլիզար որ իր կեանքում միայն առատ-առատ բաշխել սովորած էր անցողարձ ճամբորդներուն և մուրացիկ աղքատներուն:



Վաղարշապատ գիւղի ծայրը. մի գետնափոր տան մէջ Գիւլիզարը իւր երկու որբերի և ծերունի հօր հետ ծուարեր էր... Գաղթելու օրից անցեր էր 4—5 ամիս. խեղճ Գիւլիզարը միայն մի քանի շաբաթ առողջ կեանք անցուցեր էր, զառն վիճակին և լիտին չքաւորութեան չը դիմանալով՝ իր առողջութիւնը քայքայուած էր:

Մայիս ամիսն էր. Բնութիւնը զարդարուեր էր հազարաւոր ծաղիկներով, թռչունները ուրախ ուրախ կճըլլըլալին, բացուեր էր մալխի դարդ՝—վարդը, միայն խեղճ Գիւլիզարն պիտի թառամէր.....:

Առաւօտ էր. Արեւի շողերը դիպեր էր Գիւլիզարի գլխու վերան... նորա դէմքն իսպառ գունատուած էր... էլ առաջուպ վառվռուն հպեացք չունէր, — դառն ցաւերի ներքև մաբելու մօտ էր իր կենաց ճրագը: Հողին խաղաղ էր, ոչ մի զըծ—

դո՛ւ ըստ չէ՛ր արտասաներ... երեսը դէպ աղօթարան դարձուցած աղօթք կմրմնջար... ծերունի հալըր և մեծ որդին հիւանդի երկու կողմը նստեր էին: Հալըր զգալով Գիւլիզարի անյուս վիճակ, կարտասուէր... իսկ Աւետը՝ մեծ որդին, անդադար մօր նալելով, կը կրկնէր, մարէ, ինչ օգնութիւն անեմ որ առողջանաս:

Խաւար գիշերներն ընկը. սև ամպերը ծածկեր էին ողջ հորիզոնը, ուժգին քամին կը փչէր. և Գիւլիզարի խրճիթի դուռը կ'ճոճուար: Ամեն մի շուկից Աւետի զգալուն սիրտը կըռկար, խեղճ, որքան անհանդիստ էր.... քնի մէջ երկու անգամ ցնցոկեց. արթնցաւ, և մօր նալեց.. դարձեալ քնեց և դէշ երազներով պաշարուած արթնցաւ... իբր թէ մի սև ագռաւ եկաւ իր մօր անկողնու վերայ՝ կըռկըռաց և կտուցից մի չոր փալտ ձգեց իր վերայ... Խեղճ Աւետ. վալ-վալ կանչեց արթնցաւ. և ամբողջ մարմնով սարսուռաց... իմացաւ որ չարագուշակ էր իր երազը, որ շուտով պիտի կատարուէր...

Աղօթարանը բացուեցաւ. Լուսաստղը բարձրացաւ, դիւղական եկեղեցոյ դանդերը տուին. և գիշերային ժամերգութիւնը սկսուեց.. կիսակենդան Գիւլիզարը կարծես լսեց դանգերի ղողանջը և վերսկսեց իր աղօթքը... բաւական երկար աղօթեց և ծերունի հօր ծնկան վերայ խաղաղ հոգին աւանդեց....

Եւ Գիւլիզարը որ միայն մահ կը խնդրէր, մահ դտաւ գլինքն և հոգեհանութեան ժամուն կարգաց ու մրմնջաց իր վերջին ողբերգութիւնը՝

Հալըրենիքէն զրկուած

Օտարութեան մէջ մեռալ,

Մեր չէն տունը՝ աւեր դարձաւ

Եւ օջախիս ծուխը մարեցաւ:

ՕՐ. ԿԱՐԻՆԷ ԽՐԻՄԵԱՆ